ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/38971-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Ք-679-13.10.2023-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1127 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Ք-679-13.10.2023-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում է հետևյալը.

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 420.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության անունից Արցախը որևէ այլ պետության կազմում ճանաչելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:»:

Նախ նշենք, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից է իրավական որոշակիության սկզբունքը: Այն ենթադրում է, որ օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՍԴՈ-1270, ՍԴՈ-1176, ՍԴՈ-1449):

Հարկ է նկատել, որ նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ դիսպոզիցիայի ուսումնասիրությունից պարզ չէ, թե ինչպես է դրսևորվելու հանցակազմի օբյեկտիվ կողմը, այսինքն՝ ենթադրյալ հանցանք կատարած անձն ինչ գործողություն կամ անգործություն (հրապարակային կոչ, հայտարարություն, գրավոր փաստաթղթի ստորագրում և այլն) պետք է կատարի, որը միտված կլինի այլ պետության կազմում ճանաչելուն: Այսինքն՝ հանցակազմի պարտադիր տարր հանդիսացող օբյեկտիվ գործողությունների շրջանակն անորոշ է, հստակ չէ օբյեկտիվ կողմի պարտադիր պայմանը, ինչն իրավակիրառ պրակտիկայում կհանգեցնի տարաբնույթ մեկնաբանությունների և շփոթության:

Բացի այդ, հարկ է նշել, որ Ալմա-Աթայի հռչակագրով Անկախ պետությունների համագործակցության ստեղծման հիմնադիր փաստաթղթին միանալով՝ Հայաստանի Հանրապետությունը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև գոյություն ունեցած վարչական սահմանները դեռևս 1991 թ. ճանաչել է իբրև նորանկախ հանրապետությունների միջպետական սահմաններ:

Նախագծով առաջարկվում է նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 420.2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության անունից Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը, Հայոց ցեղասպանությունը հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը կամ դրա վտանգավորությունը նսեմացնելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:»:

Գտնում ենք, որ քննարկվող արարքի կատարման համար ՀՀ քրեական օրենս-

գրքում արդեն իսկ նախատեսված է քրեական պատասխանատվության: Այն իրավացիորեն ներառված է ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ գլխում, որտեղ սահմանված նորմերը համապարփակ կարգավորում են խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված ծանրագույն հանցագործությունների քրեորեն պատժելիության հարցերը: ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելու, արդարացնելու, դրանք քարոզելու կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելու համար, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է առավել խիստ՝ երկուսից հինգ տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ՝ հիշյալ արարքն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ գլուխը, որում առաջարկվում է կատարել համապատասխան լրացումները, կրում է «Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությունը, ուստի քննարկվող գլխում չեն կարող նախատեսվել այնպիսի արարքներ, որոնք այս կամ այն կերպ չեն ոտնձգում Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի հիմունքների կամ պետության անվտանգության դեմ: Ակնհայտ է, որ ցեղասպանությունը հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը կամ դրա վտանգավորությունը նսեմացնելը չի կարող դիտվել որպես ՀՀ սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցավոր արարք, այլ այն իր վտանգավորության բնույթով հանցավոր արարք է՝ ուղղված խաղաղության և մարդկության անվտանգության դեմ:

Նույն խնդիրն առկա է նաև նախագծով առաջարկվող առաջին լրացման դեպքում: Նկարագրվող արարքը նույնպես իր բնույթով չի կարող դիտարկվել որպես Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի հիմունքների կամ պետության անվտանգության դեմ ուղղված, քանի որ եթե անգամ հիմնվելով նախագծի տրամաբանության վրա ընդունենք, որ Սահմանադրության նախաբանում նշված նպատակների դեմ ուղղված արարքները ևս ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով կարող են դիտարկվել որպես Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններին համահունչ հանրային բարձր վտանգավորություն ունեցող հանցանքներ, ապա հարկ է հաշվի առնել, որ Սահմանադրության նախաբանը Հայաստանի անկախության մասին հռչակագրից հղում է կատարում միայն դրանում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներին և համազգային նպատակներին, այնինչ Հայաստանի անկախության մասին հռչակագրում կոնկրետ այս հարցին առնչվող հիմնարար սկզբունք կամ համազգային նպատակ առկա չէ: Հռչակագրի միայն նախաբանում և ոչ թե բուն տեքստում առկա է հիշատակում 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում

է, որ նախագծով առաջարկվող լրացումներն ունեն խնդիրներ իրավական որոշակիության, քրեական օրենսգրքի կառուցվածքի տրամաբանության հետ, ինչպես նաև պարունակում են ներպետական և միջազգային ատյաններում վերոշարադրյալ և այլ հիմնավորումներով տարաբնույթ մեկնաբանման առիթ դառնալու ռիսկեր, ուստի առաջարկում է ձեռնպահ մնալ դրանք կատարելուց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1127 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արա Մկրտչյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Ք-679-13.10.2023-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

10.11.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 420.1 և 420.2 հոդվածներով.

«Հոդված 420.1. Արցախը որևէ այլ պետության կազմում ճանաչելը

1. Հայաստանի Հանրապետության անունից Արցախը որևէ այլ պետության կազմում ճանաչելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 420.2. Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը, Հայոց ցեղասպանությունը հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը կամ դրա վկանգավորությունը նսեմացնելը

1. Հայաստանի Հանրապետության անունից Հայոց ցեղասպանության ճանաչումից

հրաժարվելը, Հայոց ցեղասպանությունը հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը

կամ դրա վտանգավորությունը նսեմացնելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից

տասնհինգ տարի ժամկետով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան

հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ինչպես այլ երկրների սահմանադրությունների մեծամասնությունը, ՀՀ Սահմանադրության տեքստը ևս սկսվում է նախաբանով: Սահմանադրության նախաբանները սովորաբար ներառում են դրույթներ Սահմանադրության պատմական և քաղաքական նախադրյալների, սահմանադրության ստեղծման շարժառիթների վերաբերյալ: Դրանք, որպես կանոն, արտահայտում են սահմանադրի ըմբռնումը սահմանադրության ընդունման պատմական ժամանակահատվածի և սահմանադրական տեքստի հիմքում ընկած հիմնարար սկզբունքների և նպատակների վերաբերյալ: Սահմանադրության նախաբանն ուրվագծում է տվյալ պետության բնորոշ հատկանիշները և ինքնության ամենակարևոր հարցերը: Եթե նախկինում սահմանադրության նախաբանին տրվում էր հիմնականում քաղաքական-հռչակագրային նշանակություն, ապա ներկայումս առավելապես ընդունվում և ընդգծվում է նրա իրավական բնույթը:

Հանդիսանալով սահմանադրության տեքստի բաղկացուցիչ մաս, սահմանադրության նախաբանը ունի կարևոր սահմանադրական-իրավական, նորմատիվ բովանդակություն: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանը Սահմանադրության այն հազվագյուտ դրույթներից մեկն է, որն իր ընդունման օրվանից որևէ փոփոխության չի ենթարկվել և ընդունվել է քաղաքական ուժերի միջև լայն համաձայնության արդյունքում:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Սահմանադրության տեքստի մշակման համար դեռևս 1990 թ. ձևավորվեց Սահմանադրական հանձնաժողով:

1994 թ. հոկտեմբերի 8-ին Սահմանադրական ընդլայնված հանձնաժողովը, Սահմանադրության նախաբանին վերաբերող լայն քննարկումների արդյունքում 19 կողմ և 1 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ ընդունեց Սահմանադրության նախաբանի այն նախագիծը, որը հետագայում, միայն փոքր խմբագրական փոփոխություններով, ներառվեց 1995 թ. հուլիսի 5-ի Սահմանադրության վերջնական տեքստի մեջ (Սահմանադրական ընդլայնված հանձնաժողովի նիստի արձանագրություն, հ. 70, էջ 12): Այդ նախագիծը նախորդ՝ 1994 թ. ապրիլի 20-ի Սահմանադրության նախագծից («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 23.04.1994 թ.) տարբերվում էր միայն նրանով, որ հղում էր կատարում 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության մասին հռչակագրին (ՀՀ Գերագույն Խորհրդի Տեղեկագիր, 1990/16):

ՀՀ Սահմանադրության նախաբանն արձանագրում է, որ հայ ժողովուրդն ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ «հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները» (ընդգծ. հեղ.):

Ինչպես Սահմանադրության ընդունումից անմիջապես հետո հրապարակված իր գրքույկում նշում է Վլադիմիր Նազարյանը, ով Սահմանադրության տեքստի մշակման հիմնական հեղինակներից էր և գլխավորում էր ընդլայնված Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքային խումբը, «ներածությունում կատարված վկայակոչման (հղման) ուժով Հայաստանի անկախության մասին հռչակագիրը վերածվում է ՀՀ Սահմանադրության բաղադրամասի» (Վլադիմիր Նազարյան, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը. Ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Երևան, 1995, էջ 5-6): Այդ վկայակոչման միջոցով Հայաստանի

անկախության մասին հռչակագրում ամրագրված դրույթները ստացան սահմանադրական կարգավիճակ:

Հայաստանի անկախության հռչակագիրը, իր հերթին, որպես իր ընդունման հիմք, մատնանշում է 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշումը (ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Տեղեկագիր, 1989/23): «Հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը», Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ըստ այդ որոշման 1-ին կետի, «ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19- ի նիստի որոշումներում» (ընդգծ. հեղ.):

Որոշման 2-րդ կետով «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի լիազոր-ներկայացուցիչների համագումարը և նրա ընտրած Ազգային խորհուրդը որպես մարզի ներկայումս գործող միակ օրինական իշխանություն»: Հայաստանի Սահմանադրության նախաբանը Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված համազգային նպատակների ներքո նկատի ունի առաջին հերթին հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտումը, ինչպես նաև Անկախության մասին հռչակագրի 11-րդ կետում արձանագրված Հայաստանի Հանրապետության պարտականությունը՝ սատար կանգնելու «1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»:

Հայաստանի Սահմանադրության նախաբանի և Հայաստանի անկախության մասին հռչակագրի պարտադիր իրավական բնույթի վերաբերյալ հայ սահմանադրա-իրավական դոկտրինայում տարակարծություններ չկան: Ըստ Հ. Խաչատրյանի, «երբ պրեամբուլան հռչակագրային դրույթներ է բովանդակում կամ հղում է կատարում պետության համար վճռորոշ նշանակություն ունեցող հռչակագրի (օրինակ, Անկախության հռչակագրին), ապա պրեամբուլայի այդ դրույթներն ունեն նույն իրավաբանական նշանակությունը, ինչ որ Սահմանադրության հիմնական մասի նորմերը» (Հենրիկ Խաչատրյան, Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, Երևան 1997, էջ 29):

2010 թ. հրապարակված Սահմանադրության մեկնաբանություններում փաստվում է, որ«թե՛ մասնագիտական գրականության մեջ, և թե՛ դատական պրակտիկայում Սահմանադրության նախաբանի արժեբանական նշանակությունն ու իրավական կարևորությունը որևէ ձևով կասկածի տակ չի դրվում» (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան 2010, էջ 38):

Հայաստանի Սահմանադրության նախաբանի և Հայաստանի անկախության մասին հռչակագրի պարտադիր իրավաբանական բնույթը ուղղակիորեն արտացոլված է Հայաստանի և Թուրքիայի միջև կնքված արձանագրությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանի 2010թ. հունվարի 12-ի որոշման մեջ:

Ըստ այդ որոշման 5-րդ կետի՝ ««Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի ՀՀ Սահմանադրության նախաբանի դրույթներին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին»: Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը

որոշման մեջ չի բավարարվում Սահմանադրության նախաբանի մատնանշմամբ, այլ ուղղակիորեն հղում է նաև Հայաստանի անկախության մասին հռչակագրի կոնկրետ դրույթին: Միանշանակ է, որ ըստ Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր իրավական ակտ պետք է համապատասխանի՝ ինչպես Հայաստանի Սահմանադրության դրույթներին, այլ նաև Հայաստանի անկախության մասին հռչակագրի բոլոր այն դրույթներին, որոնք ուղղակիորեն արտացոլված չեն Հայաստանի Սահմանադրության բուն տեքստում:

Արցախի ինքնորոշման պաշտպանությունն առնվազն 1988 թվականից սկսած եղել է Հայաստանի իշխանությունների պաշտոնական քաղաքականությունը և վերածվել է համազգային նպատակի Հայաստանի Սահմանադրության նախաբանի իմաստով: Այդ նպատակին հասնելու եղանակները ժամանակի ընթացքում, կախված կոնկրետ իրավիճակից, ենթարկվել են փոփոխությունների, բայց նպատակը մնացել է անփոփոխ՝ Արցախի ինքնորոշումը:

Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի ծավալած լայնածավալ ագրեսիայի պայմաններում 1992 թ. հուլիսի 8-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, «հիմնվելով միջազգային իրավունքի հիմնադրույթների, ազգերի ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքների վրա», որոշեց «հետևողականորեն սատար կանգնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը» (Գերագույն Խորհրդի Տեղեկագիր, 1992/13): 1992 թ. հուլիսի 8-ի որոշման 2-րդ կետը հստակորեն սահմանում էր Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը Արցախի ինքնորոշման փաստի վերաբերյալ. «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում» (ընդգծ. հեղ.): 1992 թ. հուլիսի 8-ի որոշումը կառավարող մեծամասնության և «Ազգային Դաշինքի» միջև փոխհամաձայնության արդյունք էր. այն ընդունվեց կոնսենսուսով (169 կողմ, 3 դեմ 1 ձեռնպահ) (Գերագույն Խորհրդի Տեղեկագիր, 1992/13, էջ 30): Քանի որ Հայաստանի խորհրդարանը դեռևս 1989 թ. դեկտեմբերի 1-ին ճանաչել է Արցախի «ինքնորոշման փաստը», 1992 թ. հուլիսի 8-ի որոշմամբ վերահաստատել է իր այդ դիրքորոշումը, և 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրության նախաբանով որպես հիմք է ընդունել Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված համազգային նպատակները, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Արցախի ինքնորոշումը, ապա ՀՀ որևէ իշխանություն իրավունք չունի ձեռնարկել որևէ գործողություն, որն ուղղված կլինի Արցախի ինքնորոշման փաստի ժխտմանը:

Հայաստանի Հանրապետության կողմից կնքած որևէ նման պայմանագիր կհակասի Հայաստանի Սահմանադրության նախաբանին և Հայաստանի անկախության մասին հռչակագրին: Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել Ազգային ժողովի կողմից:

Համանման հիմնավորումները վերաբերում են նաև Հայոց ցեղասպանության ժխտմանը:

Ի լրումն, հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելը կարևոր է ոչ միայն հայերի համար՝ արդարության վերականգնման տեսանկյունից, այլև ողջ աշխարհի համար, որ կանխարգելվեն ապագա ցեղասպանությունները:

Մասնավորապես՝ եթե պետությունը ընդունել է օրենք ցեղասպանության ճանաչման մասին, և սա համարվում է որպես անժխտելի փաստ, ապա ցեղասպանությունների կանխարգելման տեսանկյունից կարևոր է դրա ժխտումը քրեականացնող պատասխանատվությունը:

Այսօր էլ աշխարհում տեղի են ունենում ցեղասպանություններ: Հենց այս պատճառով էլ ժխտողականներին, ռեվիզիոնիստներին և պատմությունն ու պատասխանատվությունն աղավաղողներին չպետք է թույլ տալ արտահայտվել և քարոզչություն կատարել: Հարցը

վերաբերում է նրան, թե ինչ է տեղի ունեցել: Կապ չունի, որ այսօր պատասխանատուները չկան կամ մահացել են: Ուղղակի պետք է ասենք ճշմարտությունը:

Դրանով չի խոչընդոտվում խոսքի ազատությանն ու կարծիքների փոխանակմանը, սակայն ժխտողականությունը կարծիք չէ, այն ճշմարտության հերքում է: Այդ պարագայում կարող ենք ասել, որ ռասիզմն ու քսենոֆոբիան նույնպես կարծիք են, սակայն նման կարծիքների արտահայտումը ևս քրեականացվում է: Այդ պարագայում պետք է հավասարության նշան դնենք ճշմարտության ու սխալի միջև:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները Նշված նախագծի ընդունումը պայմանավորված է պաշտոնատար անձանց կողմից ՀՀ Սահմանադրության և Անկախության հռչակագրի վկայակոչված դրույթները խախտելու միտումով, որի մասին վկայում են բազմաթիվ հայտարարություններ և գործողություններ:

Դա այն դեպքում, երբ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանն աջակցելը՝ Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորվելու հեռանկարով, Հայկական հարցի բարձրացման և հետևողական լուծման քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրական պարտականությունն է:

Արցախը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում, ավելին՝ այն այժմ արդեն կայացած պետություն է: Արցախի, ինչպես նաև հայկական հարցը հայության գոյութենական խնդիրների փաթեթի մաս է:

Առաջարկվող կարգավորումների բնույթը Նախատեսել քրեական պատասխանատվություն պաշտոնատար անձի կողմից Արցախն Ադրբեջանի կազմում ընդունելու կամ ճանաչելու, Հայոց ցեղասպանությունը ժխտելու վերաբերյալ ցանկացած արարքի համար՝ անկախ դրսևորման եղանակներից, սահմանելով ազատազրկում՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Ակնկալվող արդյունքը

Կանխարգելել պաշտոնատար անձի կողմից Արցախն Ադրբեջանի կազմում ընդունելու կամ ճանաչելու, Հայոց ցեղասպանությունը ժխտելու վերաբերյալ ցանկացած արարք՝ անկախ դրսևորման եղանակներից՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական կարգի պահպանման նկատառումներով:

ՀԱՎԵԼՅԱԼ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտության

արդիականությունը

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված էր 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի (այսուհետ՝ Հռչակագիր) նախաբանի և 11-րդ կետի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության նախաբանի հիմնարար պահանջներն ապահովելու, ինչպես նաև Հռչակագրի և Սահմանադրության նախաբանի դրույթների խախտումները կանխարգելելու անհրաժեշտությամբ:

Թեև 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Արցախի Հանրապետության դեմ իրականացված, միջազգային իրավունքը կոպտորեն խախտող ագրեսիայի արդյունքում փաստացի (դե ֆակտո) Արցախի Հանրապետության ինքնիշխանությունը ներկայումս կորսված է, սակայն, իրավաբանորեն (դե յուրե) Արցախի Հանրապետությունը շարունակում է պահպանել իր գոյությունը: Այն ստեղծվել է ժողովրդի կամարտահայտության հիման վրա՝ 1991 թվականին կայացած համաժողովրդական հանրաքվեի արդյունքում, և որևէ պաշտոնյա իրավասու չէ չեղարկելու այդ հանրաքվեի արդյունքները կամ Արցախի Հանրապետության Անկախության հռչակագիրը: Նշվածի շրջանակներում Արցախի Հանրապետության նախագահի հրամանագիրը Արցախի Հանրապետության գոյության դադարեցման մասին ևս առոչինչ է, քանի որ այն ստորագրվել է ժողովրդի ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի ներքո, ինչի մասին նշված է հրամանագրում: Ուշագրավ է, որ պաշտոնական Ադրբեջանի մեջբերումներն Արցախի նախագահի այդ հրամանագրից ինքնին վկայում են, որ Ադրբեջանը ընդունում է՝ Արցախի Հանրապետությունն ուներ սուբյեկտայնություն:

Վերոգրյալի հաշվառմամբ է՛լ ավելի արդիական է դարձել Արցախի Հանրապետության այլ պետության կազմում ճանաչումը քրեականացնող օրենքի ընդունումը, քանզի դրանից հրաժարումը փաստացի հավասարազոր է Ադրբեջանի կողմից իրականացված Արցախի հայ բնակչության ցեղասպանության և էթնիկ զտումներին հանցակցությանը, և դրանց միջոցով Արցախի պետականության վերացման փորձի վավերացմանը: Բացի այդ, հաշվի առնելով, որ ադրբեջանական ցեղասպան քաղաքականությունը հանգեցրել է Արցախի Հանրապետության բնակչության համատարած էթնիկ զտմանը, և նկատի ունենալով Անկախության հռչակագրի ու Սահմանադրության պատգամն ուղղված Հայաստանի Հանրապետությանը՝ պահանջատեր լինել ու կանխարգելել ցեղասպանությունները, անհրաժեշտ է քրեականացնել նաև Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը, Հայոց ցեղասպանությունը հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը կամ դրա վտանգավորությունը նսեմացնելը: Նշվածը բխում է նաև 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված և Հայաստանի Հանրապետության համար 1993 թվականի հունիսի 23- ին ուժի մեջ մտած «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայից (այսուհետ՝ Կոնվենցիա): Կոնվենցիայի 1-ինհոդվածի համաձայն՝ «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար:»

Կոնվենցիայի լույսի ներքո ևս «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի ընդունման անհրաժեշտությունը դառնում է ակնառու՝ հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող որևէ անձ կամ մարմին չի կարող Արցախի Հանրապետությունը ճանաչել մի երկրի կազմում, որտեղ կանխամտածված կերպով իրականացվել և իրականացվում են ցեղասպանություններ և էթնիկ զտումներ: